**ՏԵՂԵԿԱՆՔ**
**ԳՈՐԾՈՂ ՕՐԵՆՔԻ ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

**Հոդված 19.1 «Զենքի շրջանառության կարգավորման մասին» օրենքով նախատեսված լիցենզիաներ և թույլտվություններ տալու և դրանց գործողության ժամկետները երկարաձգելու համար պետական տուրքի դրույքաչափերը**
***(վերնագիրը խմբ. 05.10.22 ՀՕ-379-Ն)***

**Իրավաբանական անձանց տրվող լիցենզիաներ**

1. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի արտադրություն կազմակերպելու համար՝

| | |
|---|---|
| ա) անժամկետ գործողության ժամկետով | բազային տուրքի 1000-ապատիկի չափով |
| բ) անժամկետ երկարաձգելու համար | բազային տուրքի 500-ապատիկի չափով |

2. ~~Քաղաքացիական և ծառայողական~~ զենքի հարդարում կազմակերպելու համար՝

| | |
|---|---|
| ա) անժամկետ գործողության ժամկետով | բազային տուրքի 300-ապատիկի չափով |
| բ) անժամկետ երկարաձգելու համար | բազային տուրքի 200-ապատիկի չափով |

3. Քաղաքացիական ~~և ծառայողական~~ զենքի առևտուր իրականացնելու համար՝

| | |
|---|---|
| ա) անժամկետ գործողության ժամկետով | բազային տուրքի 1000-ապատիկի չափով |
| բ) անժամկետ երկարաձգելու համար | բազային տուրքի 500-ապատիկի չափով |

4. Հրաձգարան գործարկելու համար՝

| | |
|---|---|
| ա) բաց հրաձգարանի անժամկետ գործողության ժամկետով | բազային տուրքի 500-ապատիկի չափով |

| | |
|---|---|
| բ) կիսափակ հրաձգարանի անժամկետ գործողության ժամկետով | բազային տուրքի 500-ապատիկի չափով |
| գ) փակ հրաձգարանի անժամկետ գործողության ժամկետով | բազային տուրքի 200-ապատիկի չափով |

**Իրավաբանական անձանց տրվող թույլտվություններ**

| | |
|---|---|
| 5. Յուրաքանչյուր միավոր զենք ձեռք բերելու համար (6 ամիս գործողության ժամկետով)՝ | բազային տուրքի հնգապատիկի չափով |
| ~~6. Զենքի 100-ական փամփուշտից բաղկացած խմբաքանակ ձեռք բերելու համար (6 ամիս գործողության ժամկետով)՝~~ | ~~բազային տուրքի 50 տոկոսի չափով~~ |
| 7. հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու համար (6 ամիս գործողության ժամկետով)՝ | բազային տուրքի չափով |
| 7.1. զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր, փամփուշտներ ներկրելու, արտահանելու, տարանցիկ փոխադրելու համար (6 ամիս գործողության ժամկետով) | բազային տուրքի հնգապատիկի չափով |

8. Զենքի հավաքածու կազմելու թույլտվության համար՝

| | |
|---|---|
| ա) ~~անժամկետ~~ 10 տարի գործողության ժամկետով | բազային տուրքի 80-ապատիկի չափով |
| բ) ~~անժամկետ~~ 10 տարով երկարաձգելու համար | բազային տուրքի 60-ապատիկի չափով |

9. Զենքի հավաքածու ցուցադրելու համար՝

| | |
|---|---|
| ա) 6 ամիս գործողության ժամկետով | բազային տուրքի 10-ապատիկի չափով |
| բ) 6 ամսով երկարաձգելու համար | բազային տուրքի 10-ապատիկի չափով |

10. Քաղաքացիական և ծառայողական, առանձին դեպքերում՝ մարտական զենք պահելու և օգտագործելու թույլտվության համար՝

| | |
|---|---|
| ա) 10 տարի գործողության ժամկետով | բազային տուրքի |

~~60~~ 20-ապատիկի չափով

| | |
|---|---|
| բ) 10 տարի երկարաձգելու համար | բազային տուրքի<br>~~40~~ 10-ապատիկի չափով |

11. Ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ ~~ծառայողական, այդ թվում՝ մարտական զենքի առանձին տեսակներ կրելու,~~ զենք պահելու և կրելու համար (5 տարի գործողության ժամկետով կամ 5 տարով երկարաձգելու համար)՝

բազային տուրքի
վեցապատիկի չափով

**Ֆիզիկական անձանց տրվող թույլտվություններ**

12. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ յուրաքանչյուր միավոր քաղաքացիական և ծառայողական զենք ձեռք բերելու համար (6 ամիս գործողության ժամկետով)՝

| | |
|---|---|
| ա) գազային, ազդանշանային, նետողական զենքի համար | բազային տուրքի<br>կրկնապատիկի չափով |
| բ) ողորկ-երկարափող հրազենի կամ 7.5 ջոուլից ավելի փողային էներգիայով օդաճնշիչ զենքի համար | բազային տուրքի<br>քառապատիկի չափով |
| գ) ակոսափող կամ համակցված հրազենի համար | բազային տուրքի<br>վեցապատիկի չափով |
| ~~դ) ծառայողական զենք ձեռք բերելու համար~~ | ~~բազային տուրքի~~<br>~~վեցապատիկի չափով~~ |

12.1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու համար (6 ամիս գործողության ժամկետով)՝

բազային տուրքի չափով

13. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ զենքի հավաքածու կազմելու համար՝

| | |
|---|---|
| ա) 10 տարի գործողության ժամկետով | բազային տուրքի<br>80-ապատիկի չափով |
| բ) 10 տարով երկարաձգելու համար | բազային տուրքի |

40-ապատիկի չափով

14. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ զենքի հավաքածու ցուցադրելու համար՝

ա) 6 ամիս գործողության ժամկետով — բազային տուրքի 10-ապատիկի չափով

բ) 6 ամսով երկարաձգելու համար — բազային տուրքի 10-ապատիկի չափով

15. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ գազային, ազդանշանային, նետողական զենք պահելու և կրելու համար (անժամկետ)՝

բազային տուրքի ութապատիկի չափով

16. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ ողորկ-երկարափող հրազեն պահելու և կրելու համար (10 տարի գործողության ժամկետով կամ 10 տարով երկարաձգելու համար)՝

բազային տուրքի 10-ապատիկի չափով

17. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ համակցված կամ ակոսափող հրազեն պահելու և կրելու համար (10 տարի գործողության ժամկետով կամ 10 տարով երկարաձգելու համար)՝

բազային տուրքի 20-ապատիկի չափով

18. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ օդաճնշիչ զենք պահելու և կրելու համար (10 տարի գործողության ժամկետով կամ 10 տարով երկարաձգելու համար)՝

բազային տուրքի 10-ապատիկի չափով

~~19. Հայաստանի Հանրապետության քաղաքացիներին՝ ծառայողական զենք պահելու և կրելու համար (10 տարի գործողության ժամկետով կամ 10 տարով երկարաձգելու համար)՝~~

-

-

~~բազային տուրքի 20-ապատիկի չափով~~

20. ~~Քաղաքացիական, ծառայողական և պարգևատրական~~ զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր, փամփուշտներ ներկրելու և արտահանելու համար (6 ամիս գործողության ժամկետով կամ 6 ամսով երկարաձգելու համար)՝

բազային տուրքի հնգապատիկի չափով

21. Որպես պարգև ստացած և կրակոց արձակելու համար ոչ պիտանի դարձրած (մալած) ~~մարտական կամ ծառայողական~~ զենքը ժառանգելու դեպքում անժամկետ պահելու թույլտվություն՝

բազային տուրքի հնգապատիկի չափով

22. Օտարերկրյա քաղաքացիներին՝ Հայաստանի Հանրապետությունում քաղաքացիական զենք, հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր և փամփուշտներ ձեռք բերելու համար (5 օր գործողության ժամկետով)՝

| | |
|---|---|
| ա) յուրաքանչյուր միավոր նետողական կամ սառը զենքի համար | բազային տուրքի ~~10-ապատիկի~~ չափով |
| բ) յուրաքանչյուր միավոր գազային զենքի համար | բազային տուրքի 10-ապատիկի չափով |
| գ) յուրաքանչյուր միավոր ողորկ-երկարափող հրազենի կամ 7.5 ջոուլից ավելի փողային էներգիայով օդաճնշիչ զենքի համար | բազային տուրքի 20-ապատիկի չափով |
| դ) յուրաքանչյուր միավոր երկար-ակոսափող կամ համակցված հրազենի համար | բազային տուրքի 25-ապատիկի չափով |
| ե) զենքի 100-ական փամփուշտից բաղկացած խմբաքանակ ձեռք բերելու համար | բազային տուրքի ~~հնգապատիկի~~ չափով |
| զ) հրազենի հիմնական բաղկացուցիչ մասեր ձեռք բերելու համար | բազային տուրքի ~~հնգապատիկի~~ չափով |

23. Օտարերկրյա քաղաքացիներին՝ Հայաստանի Հանրապետությունից որպես պարգև տրված զենք արտահանելու թույլտվություն՝ 2 ամիս գործողության ժամկետով՝

բազային տուրքի
10-ապատիկի չափով

24. Սույն հոդվածում նշված լիցենզիաներն ու թույլտվությունները վերաձևակերպելու կամ կրկնօրինակը տալու համար՝

լիցենզիայի կամ թույլտվության տվյալ տեսակը տալու համար սահմանված դրույքաչափի 50 տոկոսի չափով, բայց ոչ ավելի բազային տուրքի 12-ապատիկից

25. Զենքի հետ կապված և անվտանգության կանոնների իմացության տեսական և գործնական քննությունների համար՝

բազային տուրքի
եռապատիկի չափով

26. Զենքի տիրապետումը խոչընդոտող հիվանդությունների և վիճակների մասին բժշկական հետազոտություններ և դրանց բացակայության մասին տրվող եզրակացություն:

բազային տուրքի
20-ապատիկի չափով

*(19.1-ին հոդվածը լրաց. 02.05.01 ՀՕ-181, խմբ. 22.02.07 ՀՕ-117-Ն, խմբ. 05.10.22 ՀՕ-379-Ն, լրաց., խմբ. 13.07.23 ՀՕ-269-Ն)*

*(05.10.22 ՀՕ-379-Ն օրենքն ունի անցումային դրույթ)*